



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ

ՅԻԱՆԱԿԻ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2008

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Կատարեալ Շղէթ (Ձ.3)	Էջ 3
Աշխարհի Լոյսը	Էջ 4
Օրէնքի շշմարիտ Ուսուցումը	Էջ 4
Ուսուցում Սպանութեան մասին	Էջ 6
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(37.14-38)

Եզեկիա պատգամաւորներուն ձեռքէն առաւ նամակը, եւ կարդալէ ետք զնաց Տիրոջ տաճարը մտաւ եւ Տիրոջ առջեւ փռեց զայն: Ապա Եզեկիա Տիրոջ աղօթեց, ըսելով. «Ո՛վ Երկնաւոր Զօրքերու Տէր, Իսրայէլի Աստուածը, որ քերովբէներէն վեր կը նստիս. դո՛ւն ես միակ Աստուածը աշխարհի բոլոր թագաւորութեանց, որովհետեւ երկինք ու երկիր դո՛ւն ստեղծեցիր: Ականջ տուր եւ լսէ՛, Տէ՛ր, նայէ եւ տե՛ս այն պատգամը որ Սենեքերիմ թագաւորը զրկեց՝ նախատելու համար քեզ, որ կենդանի Աստուածն ես: Իրաւ է որ Ասորեստանի թագաւորները ամբողջ աշխարհը աւերեցին եւ բոլոր ժողովուրդներու կողմէրը այրեցին, որովհետեւ անոնք աստուածներ չէին, այլ մարդոց ձեռքով շինուած փայտ ու քար էին եւ ուստի փճացան: Բայց դուն, ո՛վ Տէր, մեր Աստուածը, ազատէ՛ մեզ անոր ձեռքէն, որպէսզի աշխարհի բոլոր թագաւորութիւնները ճանչնան թէ միայն դո՛ւն ես Աստուածը»:

Այն ատեն Աստուած Ամոսի որդի Եսային զրկեց Եզեկիային մօտ, եւ անիկա գալով, ըսաւ. «Այսպէս կ'ըսէ տէրը, Իսրայէլի Աստուածը. - Լսեցի ինչ որ աղօթքով խնդրեցիր ինձմէ Ասորեստանի Սենեքերիմ թագաւորին համար: Ահա, Աստուած այսպէս կ'ըսէ անոր.

«Սիոն քաղաքը, որ չկրցար գրաւել, պիտի անարգէ եւ արհամարհէ քեզ, Երուսաղէմի բնակչու թիւնը պիտի հեզնէ ու ծաղրէ քեզ: Գիտե՞ս դուն՝ ո՛վ նախատեցիր ու գրգռեցիր, որո՛ւ դէմ յոխորտացիր. դուն արհամարհանքով նայեցար Իսրայէլի Սուրբ Աստուծոյն որ բարձունքներուն մէջ կը բնակի. քու պատգամաւորներուդ միջոցաւ Տէ՛րը նախատեցիր: Պարծենալով ըսիր. “Իմ բազմաթիւ կառքերովս մինչեւ լեռներու կատարը

բարձրացայ, մինչեւ Լիբանանի գագաթները ելայ եւ կոտրեցի անոր մայրիներուն հպարտութիւնը, անոր նոճիներուն գեղեցկութիւնը, եւ հասայ մինչեւ հեռաւոր խորքը անտառին: Ուզած տեղս կամուրջ նետեցի, եւ ուզած տեղս գետերն ու լիճերը ցամքեցուցի”: Չե՞ս լսած թէ աշխարհը ե՛ս ստեղծեցի կանուխէն եւ ե՛ս կարգաւորեցի զայն ժամանակի սկիզբէն. եւ հիմա ե՛ս ուզեցի որ դուն ազգերն ու իրենց ամբողջները աւերես. ե՛ս էի քաղաքներու եւ բերդերու բնակիչները ձեռքդ յանձնողը: Չե՞ս վերցուցի անոնց վրայէն, եւ իսկոյն չորցան, տանիքին չորցած խոտին պէս եղան, կամ՝ հունձքէն առաջ չորցած սէզին պէս: Արդ, ես գիտեմ՝ դուն ո՛ւր կը հանգչիս, դէպի ո՛ւր կ'երթաս եւ ուրկէ կու գաս: Ինձի հանդէպ արտայայտած քու զայրոյթիդ եւ թափած դառնութեանդ համար՝ բերանակապ պիտի անցընեմ դունչիդ, սանձ պիտի դնեմ կզակիդ, եւ քեզ եկած ճամբովդ ետ պիտի դարձընեմ”:

Իսկ քեզի, ո՛վ Եզեկիա, Տէրը այսպէս կ'ըսէ. Հետեւեալը քեզի նշան թող ըլլայ. - այս տարի անցեալ տարուան ցանքը պիտի ուտէք, իսկ գալ տարի՝ ինչ որ մնացած գտնէք. երբ երրորդ տարին գայ՝ պիտի սերմանէք ու հնձէք, այգի պիտի տնկէք եւ անոր պտուղը վայելէք: Ժողովուրդին մնացորդը դարձեալ արմատ պիտի նետէ իր հողին վրայ եւ պտուղ պիտի տայ: Այդ մնացորդը՝ Երուսաղէմ ապաստանողները պիտի ըլլան, որոնք իրենց փրկութիւնը պիտի գտնեն Սիոն լեռան վրայ:

Երկնաւոր Զօրքերու Տէրը նախանձախնդրութեամբ պիտի կատարէ այս խոստումները: Այդ պատճառով ալ, Տէրը այսպէս կ'ըսէ Ասորեստանի թագաւորին մասին. «Անիկա այս քաղաքը պիտի չմտնէ. ո՛չ նեո պիտի արձակէ ասոր վրայ, ո՛չ վահաններով պիտի յարձակի եւ ո՛չ ալ պատնէշներով քաղաքը պիտի պաշարէ. եկած ճամբով ետ պիտի երթայ եւ այս քաղաքը պիտի չմտնէ: Ես պիտի պաշտպանեմ եւ ազատեմ այս քաղաքը, ինձի եւ իմ ծառայիս՝ Դաւիթին համար», - կ'ըսէ Տէրը:

Նոյն գիշերն իսկ Տիրոջ հրեշտակը եկաւ եւ ասորեստանցիներու բանակէն հարիւր ութսուն հինգ հազար մարդ կոտորեց. բանակայինները երբ առաւօտուն եկան, զանոնք

բոլորը մեռած գտան: Սենեքերիմ թագաւոր հոնկէ ելաւ եւ վերադարձաւ իր տունը, Նինուէ: Եւ երբ օր մը իր հովանաւոր աստուծոյն՝ Նասրաքի տաճարին մէջ երկրպագութիւն կ'ընէր, իր երկու զաւակները՝ Ագրամելէք եւ Սարասար, զինք սուրով սպաննեցին եւ փախան Հայաստան գացին: Իսկ Սենեքերիմի տեղ թագաւորեց իր տղան՝ Ասորդանը:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ
ՆԱՄԱԿԷՆ
(1.1-12)**

Մենք՝ Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, կը գրենք ձեզի՝ թեսաղոնիկեցիներու եկեղեցիին որ մեր Հօր Աստուծոյ եւ Տէր Յիսուս Քրիստոսի կը պատկանի: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար՝ որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ: Ձեր այդ համբերութիւնը եւ հաւատքը ապացոյցը պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել ձեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Այն օրը այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր գօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումի առարկան ըլլալու: Այն օրը պիտի գիտնաք թէ ճշմարիտ էր ինչ որ յայտնեցինք ձեզի: Ահա թէ ինչու միշտ կ'աղօթենք ձեզի համար, որպէսզի Աստուած ձեզ արժանի ընէ այդ կոչումին, իր գօրութեամբ կատարէ ձեր բոլոր բարի փափաքները եւ արդիւնաւորէ ձեր հաւատքը, որպէսզի ձեզմով փառաւորուի մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունը, եւ դուք փառաւորուիք իրմով, մեր Աստուծոյն եւ Տիրոջ Յիսուս Քրիստոսի պարգեւած շնորհքովը:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ
(14.12-24)**

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ. «Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւէր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, որ-պէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւէրիդ փո-խարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ընդունելութիւն կը սարքես, կանչէ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն Երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք քեզի փոխարէնը հատուցանելիք ոչինչ ունին: Եւ զիտցած եղիր, որ հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ»:

Երբ
ընդունելութիւն
կը սարքես,
կանչէ
աղքատներն ու
խեղանդամները,
կաղերն ու
կոյրերը եւ այն
ատեն Երանելի
պիտի ըլլաս,
որովհետեւ
անոնք քեզի
փոխարէնը
հատուցանելիք
ոչինչ ունին:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. «Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ»:

Յիսուս անոր հետեւեալ առակը պատմեց.
«Մարդ մը կար որ մեծ ընթրիք մը սարքեց եւ շատեր հրաւիրեց: Ընթրիքի ժամուն իր ծառան ղրկեց, որպէսզի հրաւիրեալներուն ըսէ. “Եկէ՛ք, ամէն ինչ պատրաստ է արդէն”»: Հրաւիրեալները սկսան մէկ առ մէկ հրաժարիլ: Առաջինը ըսաւ. “Արտ մը գնեցի. պէտք է երթամ եւ տեսնեմ գայն. հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի”: Միւսը ըսաւ. “Հինգ գոյգ եզ գնեցի. պէտք է երթամ փորձեմ գանոնք. հետեւաբար կը խնդրեմ որ ներողամիտ գտնուի”: Ուրիշ մը ըսաւ. “Տակաւին նոր ամուսնացայ. հետեւաբար չեմ կրնար գալ”: Ծառան վերադարձաւ եւ իր տիրոջ պատմեց անոնց ըսածները: Այն ատեն տանտէրը վրդոված՝ ըսաւ ծառային. “Անմիջապէս քաղաք գնա եւ հրապարակներուն ու փողոցներուն մէջ ո՛րքան որ աղքատ, խեղանդամ, կաղ եւ կոյր տեսնես, բոլորն ալ հո՛ս բեր”: Քիչ ետք ծառան վերադառնալով իր տիրոջ ըսաւ. “Տէ՛ր, հրամանդ կատարեցի, բայց տակաւին տեղ կայ”: Տէրը ծառային հրամայեց. “Քաղաքէն դուրս գնա եւ ճամբաներուն վրայ ու դաշտերուն մէջ ո՛վ որ գտնես, ստիպէ որ գայ, որպէսզի տունս լեցուի: Կ'ըսեմ ձեզի, որ առաջին հրաւիրեալներէն ո՛չ մէկը ինձի հետ ընթրիքի պիտի նստի”»:

ՅԻՄՆԱԿԻ Գ ԿԻՐԱԿԻ
(ԾԻՍԱԿԱՆ ԵՒ ԿՐՈՒԱԿԱՆ
ԲԱԾՁՏՐՈՒԹՅՈՒՆԱՆԵՐ - ԹԻՒ 33)

ԼԳ

«ԿԱՏԱՐԵԱԼ ԵՈՒԹ» (Չ.3)

Ահա կը ներկայացնեմ Ձարեհ արք. Ազնաւորեանի նայուածքը Յիսուսի «Կատարեալ եղէք» պատգամին մասին, որ ան յայտնած է Մատթէոսի աւետարանի իր սերտողութեան ընթացքին՝ աւելի քան տասնհինգամեակ մը առաջ:

«Լսեր էք արդարեւ որ ըսուած է.- Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ»:

«Սիրէ՛ ընկերդ»: Այս պատուէրին աղբիւրն է Ղեւտացիներու գիրքի 19.18 համարը. այնտեղ գրուած է. «Քու ընկերդ քու անձիդ պէս սիրէ»:

«Ատէ՛ թշնամիդ» չկայ Աստուածաշունչին մէջ: Անիկա ժողովուրդին ստեղծած բանն է կամ ժողովրդական սխալ եզրայանգում մըն է: Երբ Յիսուս «ըսուած է» կ'ըսէ, Օրէնքէն չէ, որ կը մէջբերէ, այլ իր օրերուն տարածուած մտայնութիւնն մը նկատի ունի: Եւ այդ մտայնութեան իր «դարման»ը կ'ըսուցանէ, ըսելով. «Իսկ ես կ'ըսեմ ձեզի.- Սիրեցէ՛ք ձեր թշնամիները, օրհնեցէ՛ք ձեզ անիծողները, բարիք ըրէ՛ք ձեզ ատողներուն եւ աղօթեցէ՛ք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հալածեն»:

Առաջին հարցումը որ կը դրուի սա է. Կարելի՞ է թշնամիները սիրել:

Յիսուս իր հետեւորդներէն անկարելի՞ն կը պահանջէր:

Ո՛չ: Ան գիտէր որ երբ մարդ էակը կամենայ՝ կրնայ ընել: Ուստի, անկարելին չէ որ կը պահանջէր:

Կը բաւէ, որ մարդը կամենայ. կամենալը՝ կարենալ է: Յիսուսի պատգամն է, թէ ան որ իրեն կը հետեւի՝ եթէ կամենայ՝ կրնայ թշնամին սիրել, անիծողը օրհնել, ատողին բարիք ընել եւ չարչարողին ու հալածողին համար՝ աղօթք:

Սովորութիւն է ըսել՝ «Աստուած կը սիրեմ»: Բայց Աւետարանը մեզի կ'ըսէ, թէ կարելի չէ զԱստուած սիրել՝ առանց մեր նմանը սիրելու: Եթէ ես ըսեմ, թէ «Աստուած կը սիրեմ, բայց եղբայրս չեմ սիրեր». կը նշանակէ որ առ Աստուած իմ սէրս սուտ է, խօսք է միայն եւ «խօսքի սահմանէն անդին չերթար»:

Ի՞նչ է թշնամին սիրելը:

Ելքի գիրքին մէջ (23.4-5) պատուէր կը տրուի, որ երբ մէկը իր թշնամիի կենդանին մոլորած գտնէ՝ թող զայն անոր դարձնէ. կամ բեռին տակ ինկած գտնելու պարագային՝ ազատէ: Այդ պատուէրը՝ թշնամիի անձին վնաս չհասցնել ալ չի՞ թելադրեր արդեօք, կը հարցնէ սրբազանը:

Թէեւ չին Կտակարանը թշնամին սիրելու խօսք չունի, սակայն գոնէ ունի թշնամիին չարիք

չհասցնելու պատուէրը: Յիսուս այդ պատուէրը կը խորացնէ, ըսած է սրբազանը:

Սիրելը զգացական զեղում մը կամ արտայայտութիւն մը չէ: Յիսուսի ակնարկած «սիրել»ը՝ նախեւառաջ սեփական մտածելակերպին փոփոխութիւնն է, որով դիմացինը իբրեւ մարդ կը դիտուի, անոր «մարդկային արժանիքները» կը ճանչցուին: Եւ երկրորդ՝ բարիք կամ բարի գործ ընել է:

Թշնամին սիրելը դիւրին չէ. անիկա «կրնայ մեզմէ սրտի յատուկ դաստիարակութիւն մը պահանջել»: Առանց սրտի դաստիարակութեան շատ դժուար է թշնամին սիրելը:

Յիսուս ըսած է, որ իր հետեւորդներուն ամբողջ նպատակը պէտք է ըլլայ Երկնաւոր Հօր նմանիլ: Այսինքն՝ մարդոց հետ վարուիլ այնպէս՝ ինչպէս Երկնաւոր Հայրը կը վարուի: Ուրեմն, ի՞նչ է Աստուծոյ վարմունքը մարդոց հանդէպ: Ան «իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը տեղացնէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ»: Հետեւաբար այն անձը որ կը փորձէ Երկնաւոր Հօր նմանիլ, նոյնպիսի վարմունք պէտք է ունենայ: Ահա ճիշդ այս կէտին է, որ Յիսուսի կատարեալ ըլլալու կոչը տրուած է. կատարեալ ըլլալ Երկնաւոր Հօր պէս:

Հետեւաբար, թշնամին սիրելը, անիծողը օրհնելը, ատողին բարիք ընելը եւ չարչարողին ու հալածողին համար աղօթելը կը նմանին այն վարմունքին՝ որ Աստուած կ'ուրեւնայ չարերուն եւ մեղաւորներուն հանդէպ: Ան որ միայն բարիները եւ արդարները կը սիրէ, միայն զանոնք կ'օրհնէ, միայն բարիք կ'ընէ ատողներուն եւ կ'աղօթէ միայն անոնց համար՝ որոնք իր բարեկամներն են՝ սովորական ճամբան է, որ կը քալէ: Միւս ճամբան է սակայն՝ կատարեալ ըլլալու ճամբան...

Յիսուս ուրիշ անգամ մը խօսած է կատարեալ ըլլալու մասին. մեծահարուստ երիտասարդին հետ հանդիպման ընթացքին: Եւ անոր ըսած է. «Եթէ կ'ըզես կատարեալ ըլլալ, զնա՛, ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինծի» (Մտ 19.21):

Այս դրուագով կը յայտնուի, որ կատարեալ ըլլալու ընթացքը ամբողջական գոհողութեամբ կատարուած/կատարուող բարեգործութիւնն է:

Արդ, թշնամին սիրելը, անիծողը օրհնելը, ատողին բարիք ընելը, չարչարողին ու հալածողին համար աղօթելը՝ բարեգործ կեանքի մը գերագոյն ընթացքն են:

Եզրակացնելով. ըստ Ձարեհ սրբազանի, կատարեալ ըլլալու Յիսուսի կոչը անկարելի չէ. անիկա կը պահանջէ կամեցողութիւն, սրտի դաստիարակութիւն եւ անխտրական բարեգործութիւն:

Հովիւ
ԳՔ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԵՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԻՆ

Հեղինակ՝ ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ
Խմբագիր՝ Գառնիկ Ք. Գ.

Ե ԳԼՈՒԽ

ԱՆՆԱՆՈՒՄ:

«Ոչ ոք նրա կր զուտ եւ կր պահէ կաթսայի տակ. ընդհակառակը, գայն աշտանակի վրայ կը դնէ, որպէսզի տունին մէջ գտնուողներուն լոյս տայ: Նոյնպէս ալ, ձեր լոյսը թող այնպէս շողայ մարդոց առջեւ, որ անոնք ձեր բարի գործերը տեսնեն եւ փառաւորեն ձեր հայրը, որ երկինքի մէջ է» (15-16):

Այս փոխաբերութեան մէջ «աշտանակ»ը կ'առնէ նախորդ փոխաբերութեան «լեռ»ին տեղը, իսկ «ճրագ»ը՝ «քաղաք»ին տեղը: Ուրեմն, աշտանակը Աստուծոյ թագաւորութիւնը կը խորհրդանշէ, իսկ ճրագը՝ այդ թագաւորութեան ժողովուրդը, այսինքն՝ հաւատացեալներուն ամբողջութիւնը:

Քրիստոսի հետեւորդները կոչուած են լոյս ըլլալու եւ լոյս տալու:

Իսկ ի՞նչ կը նշանակէ «տուն»ը:

Տունը Աստուծաշունչին մէջ թէ՛ խորհրդանշան է հաւատքի մէջ հարազատներուն, եւ թէ՛ համայն մարդկութեան:

Հաւատացեալ ըլլալը պահուրտելու համար է: Հաւատացեալը իր ստացած լոյսը կը տարածէ: Այդ է պատճառը եւ նպատակը հաւատքի մէջ իր ծնելուն:

Քրիստոնէական մեր համոզումներն ու կեանքը բնականօրէն թէ՛ մեր «տնեցի»ներուն, այսինքն՝ թէ՛ մեր հաւատքի հարազատներուն եւ թէ՛ ուրիշներուն համար անծանօթ չեն կրնար պահուիլ: Բոլորին համար ալ երեւելի եւ տեսանելի պիտի ըլլան անոնք: Եւ անոնց լոյսը տեսնելով՝ ամէնքն ալ փառաւորեն Հայրը, որ երկինքի մէջ է:

ՕՐԷՆԻ ԸՇՃԱՐՈՒՄ ՌԻՍՈՒՅՈՒՄ:

«Մի՛ կարծէք, թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին: Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ: Կ'ըսեմ ձեզի, եթէ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութենէն

աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը» (17-20):

Ինչո՞ւ համար Օրէնքի կապուած այս միտքերը միւս աւետարաններուն մէջ չենք գտնուիր:

Ինչպէս սերտողութեան սկիզբը ըսի, այս աւետարանին հասցէն հրեաներ էին: Մանօթ է, որ հրեաներուն համար չկար աւելի կարեւոր բան քան Մովսիսական Օրէնքը: Հետեւաբար, աւետարանիչը ուզած է, իր հասցէին համար մեծ կարեւորութիւն ներկայացնող այս հարցին մասին Յիսուսի կեցուածքը ներկայացնել:

«Չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու»:

Շատ մը մեկնիչներ կամ քարոզիչներ այն տպաւորութիւնը ունին, թէ Քրիստոսով արդէն Օրէնքը դադրած է գոյութիւն ունենալէ: Օրէնքը այլեւս չկայ, այլ կա՛յ միայն Քրիստոս: Անոնք սխալ կը մեկնեն Յովհաննէս աւետարանիչի խօսքը որ կ'ըսէ՝ «Օրէնքը Մովսէսի միջոցով տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը՝ Յիսուս Քրիստոսի միջոցաւ» (ՅՆ 1.17): Կը վկայակոչեն Պօղոս առաքեալի Գաղատացիներուն ուղղած նամակին այն խօսքը որ կ'ըսէ. «Աստուած աշխարհ զրկեց իր Որդին, որ կնոջմէ մը ծնաւ եւ Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ» (Գղ 4.4-5): Եւ կ'աւելցնեն՝ «Ուրեմն, մենք ենթակայ չենք Օրէնքին»: Եւ քանի որ ենթակայ չենք Օրէնքին, ինչո՞ւ գայն պահել:

Բայց այսպէս հասկնալը ճիշդ չէ: Յատկօրէն Յիսուս կ'ըսէ՝ «չեկայ ջնջելու», եւ կը շարունակէ՝ «այլ ամբողջացնելու»: Օրէնքին կարեւորութիւնը կը շեշտէ Յիսուս: Յիշենք նաեւ հարուստ երիտասարդին ուղղուած իր խօսքը: Երբ անիկա հարցուց, թէ ի՞նչ պէտք է ընէ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար, Յիսուս ըսաւ. «Եթէ կ'ուզես յաւիտենական կեանքը մտնել՝ պատուիրանները պահէ»: Ան ըսաւ. «պատանութենէս ի վեր պահած եմ. դեռ ի՞նչ կը պակսի ինձի»: Ապա Յիսուս պատասխանեց. «Եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ինչ որ ունիս՝ ծախսէ եւ աղքատներուն տուր. այդպիսով երկինքի մէջ գանձ պիտի ունենաս, եւ յետոյ՝ հետեւէ՛ ինձի» (տե՛ս Մտ 19.16-22):

Միայլ չհասկնանք Յիսուսի կատարելութեան հրաւերը: Անիկա չի ջնջեր Օրէնքին կարեւորութիւնը: Երբեք պէտք չէ անտեսել «Եթէ կ'ուզես յաւիտենական կեանքը մտնել՝ պատուիրանները պահէ» յորդորը: Յիսուս կ'ուզէ Օրէնքին գործադրութիւնը: Իրեն հետ Օրէնքը չի դադրիր, այլ կը մնայ ի գործը՝ յաւիտենական կեանքը ժառանգելու: Ոմանք ուրիշ խօսքեր կրնան մէջբերել եւ փորձել համոզիչ դարձնել իրենց մեկնութիւնը, թէ Յիսուս Օրէնքը ջնջեց: Օրինակ՝ կրնան առնել Յիսուսի այն խօսքը, որ կ'ըսէ՝ թէ նոր գինին հին տիկերու մէջ չեն

զենք, որովհետեւ հին տիկերը չեն դիմանար նոր գինիի ուժին եւ կը պայթին ու գինին կը թափի եւ տիկերը կը փճանան (Մտ 9.17): Կամ առնել այն խօսքը որ կ'ըսէ՝ «Ոչ ոք չլուսացուած նորկտորմը կը գործածէ հին հագուստի մը համար կարկտան ընելու: Որովհետեւ նոր կտորը քաշուելով՝ հագուստը կը պատռէ, եւ աւելի մեծ կ'ըլլայ պատռուածքը» (Մտ 9.16): Հետեւաբար կ'եզրակացնեն ըսելով. «Նայեցէք, Յիսուս կ'ըսէ, թէ հինը եւ նորը իրարու հետ չեն ներդաշնակուիր»:

Պօղոս առաքեալ ըսած է Գաղատացիներուն ուղղած իր նամակին մէջ. «Օրէնքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատքով արդարանանք» (Գղ 3.24):

Ի՞նչ ըսել կ'ուզէ առաքեալը:

Անգամ մը որ մէկը Քրիստոսի միացած է՝ ալ դաստիարակի պէտք չունի՞: Այդ չէ ըսածը: Մինչեւ որ մէկը Քրիստոսի մէջ ըլլայ, մինչեւ որ զՔրիստոս հագնի՝ Օրէնքը միշտ իր դաստիարակի դերը կը կատարէ եւ պիտի կատարէ. Օրէնքին դերն է դաստիարակել:

Յիսուս ալ ճիշդ այդ է, որ ըսած է: Ան ցոյց տուած է, թէ Օրէնքը առաջին ուղեցոյցն է դէպի Աստուած: Իսկ իր ուսուցումը ներկայացուցած է իբր ամբողջացում Օրէնքին:

Աստուածաշնչական յայտնութիւնը՝ ըստ մարդ էակի հոգեբանական եւ ընկալումի աճումին՝ աստիճանական զարգացում ունեցած է: Նոյնն է պարագան Մովսիսական Օրէնքէն մինչեւ Քրիստոսատուր շնորհքը:

Ուրեմն, Յիսուսի կատարածը ամբողջացում էր, այսինքն՝ յայտնութիւն Հին Կտակարանեան ուսուցումի խորագոյն պատճառին, որ սէրն է:

Պէտք է ըսել նաեւ, որ ամբողջացումը որուն մասին Յիսուս խօսեցաւ՝ իմացական արարքէ մը աւելին էր: Ան ոչ միայն Օրէնքին խորքը յայտնեց, այլ նաեւ ինք անձնապէս գործադրեց: Յիսուս Օրէնքը գործադրելով Աստուծոյ կամքին հնազանդեցաւ:

Եւ վերջապէս, կատարեալ ամբողջացումը Օրէնքին եւ մարգարէներու ուսուցումներուն՝ իր կեանքը եղաւ, ինչպէս աւետարանիչները մեզի ցոյց տուած են. Հին Կտակարանի մէջ կատարուած բոլոր խոստումները իր անձով պիտի իրականանային: Յիշենք նաեւ, որ Յիսուս խաչին վրայէն՝ նախքան իր հոգին աւանդելը

աղաղակեց, թէ ամէն ինչ կատարուած է (ՅՏ 19.30): Հետեւաբար, Յիսուս ոչ թէ միայն Օրէնքին խորքը յայտնեց եւ Օրէնքը գործադրեց, այլեւ իր կեանքով եղաւ կատարումը Մովսէսի Օրէնքին եւ մարգարէներու ուսուցումին:

«Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին» (18):

Այս համարին գրաբարը կ'ըսէ. «Ամէն ասեմ ձեզ, մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ մի որ նշանախեց մի է՝ ոչ անցցէ յօրինացն եւ ի մարգարէից մինչեւ ամենայն եղիցի»: Այս համարին մէջ «բառ» բառը չկայ, այլ կայ «յովտ» կամ «նշանախեց» բառը: Յովտը երբայական այբուբենի «եոտ» տառն է: Մինչ միւս գիրերը մեծ են՝ եոտը ամենէն պզտիկ գիրն է, որուն արաբերէն համարժէքը «եէ» տառն է: Յիսուսի ըսել ուզածն էր, թէ նոյնիսկ Օրէնքին մէջ այն ինչ որ կրնայ անկարելոր թուիլ՝ իր կարեւորութիւնը ունի: Աստուած որեւէ աւելորդ բան չէ դրած այնտեղ. իւրաքանչիւր տարրը Օրէնքին՝ իր կարեւորութիւնը ունի, հետեւաբար պէտք չէ անտեսուի:

«Ով որ ամենափոքր պատուիրանն իսկ զանց ընէ եւ ուրիշներուն ալ այդպէս սորվեցնէ, երկինքի արքայութեան մէջ յետինը պիտի նկատուի: Իսկ ով որ գործադրէ պատուիրանները եւ ուսուցանէ, մեծ պիտի ըլլայ երկինքի արքայութեան մէջ» (19):

Ի՞նչ ըսել կ'ուզէր Յիսուս այս յայտարարութեամբ: Կ'ակնարկէր յարմարցնելու փորձութեան: Գիտէք, որ յարմարցնելու համար մարդիկ կը զեղչեն կամ յաւելումներ կ'ընեն. թեթեւօրէն փոխելու, կամ եղծելու կը նային, կամ ալ ճիշդ կ'ընեն նորագոյն հասկացողութիւններուն, ըմբռնումներուն կամ անձնական քմայքներուն պատշաճեցնել: Հինէն ասդին՝ ռաբբիական մեկնութեան մէջ, դժբախտաբար քրիստոնէական մեկնութեան մէջ ալ, Աստուծոյ Օրէնքը, Աստուծոյ խօսքը նշուած պատճառներով ենթակայ եղած են այլափոխումներու: Յիսուսի այս յայտարարութիւնը մեծագոյն ազդարարութիւնն է բոլոր անոնց՝ որոնք կը համարձակին Օրէնքէն ըստ կամս որեւէ տարր զեղչել կամ Օրէնքին վրայ աւելցնել: Օրէնքէն զեղչելը կամ անոր վրայ բան աւելցնելը մեծագոյն յանցանքն են, որովհետեւ մարդ ինքզինք Աստուծոյ տուած Օրէնքէն վեր դասած կ'ըլլայ: Յստակ է. երբ ես ինքզինքիս պաշտօն կու տամ ըսելու համար, թէ Օրէնքին մէջ ասիկա կարելոր է, ասիկա կարելոր չէ, Օրէնքին դատաւոր դարձուցած կ'ըլլամ ինքզինքս: Այսինքն՝ ինքզինքս Աստուծմէ ալ

վեր դասած կ'ըլլամ: Մարդը զգաստ պէտք է ըլլայ, ալլապէս կ'իյնայ աղանդաւորներու փորձութեան մէջ:

Իսկ ի՞նչ կը նշանակեն «յետինը պիտի նկատուի» կամ «մեծ պիտի ըլլայ» խօսքերը: Մեր սովորական կեանքին մէջ կը տեսնենք, թէ ան որ կ'արհամարհէ՝ ինք ալ նոյն վերաբերումին կ'արժանանայ: Հետեւաբար, ան որ Աստուծոյ տուած Օրէնքը կ'արհամարհէ՝ Աստուծոյ աչքին ինքզինք անհաւատարիմ դարձուցած կ'ըլլայ: Իսկ ան որ կը յարգէ՝ ինք ալ յարգելի կ'ըլլայ: Հետեւաբար, ան որ Աստուծոյ տուած Օրէնքը կը յարգէ եւ կը գործադրէ՝ Աստուծոյ աչքին հաւատարիմ կ'ըլլայ եւ Անոր վարձատրութեան կ'արժանանայ: Աստուծոյ աչքին յետին նկատուողը դատապարտութիւն պիտի տեսնէ, իսկ մեծ եղողը՝ Երկինքի արքայութեան մէջ պիտի ընդունուի:

«...եթէ Աստուծոյ պատուիրաններուն նկատմամբ ձեր հաւատարմութիւնը Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն ունեցած հաւատարմութեանէն աւելի չըլլայ՝ պիտի չմտնէք երկինքի արքայութիւնը» (20):

Ի՞նչ է ըսել ուզուածը:
Նախ, տեսնենք թէ այս խօսքը ինչո՞վ կը սկսի:

Պարագայական շողկապով մը՝ «եթէ»:
Ապա ցոյց կու տայ Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն վարմունքը պատուիրաններուն նկատմամբ: Ըսեմ որ անոնց ներկայացուցած աւանդութիւնը Օրէնքը չէր, այլ իրենց հայրերուն օրէնքն էր, այսինքն՝ այն ինչ որ իրենց հայրերը մշակած էին եւ փոխանցած: Հայրերուն աւանդութիւնը Օրէնքէն տարբեր եւ Օրէնքին կողքին օրէնք էր: Այդ մասին է, որ Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն իր խօսքը ուղղելով, Յիսուս աւելի բացայայտ ըսած է. «դուք Աստուծոյ խօսքը կ'անարգէք՝ ձեր աւանդութիւնը պահելու համար» (Մտ 15.6): Անոնք ոչ թէ միայն հայրերուն մշակած աւանդութիւնը կը պահէին, այլ նաեւ իրենք ալ իրենց կարգին նոր յաւելումներ կ'ընէին եւ Աստուծոյ Օրէնքին կամայական մեկնութիւններ տալով՝ իրենց ըմբռնումներուն կը պատշաճեցնէին եւ կ'ալլափոխէին:

Ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս «արդարութիւն» բառով:

Երբայական մտքին, ինչպէս նաեւ իր ժամանակակիցներու մտքին մէջ ի՞նչ նշանակութիւն ունէր արդարութիւնը: Գաղատացիներու նամակին մէջ գրուած է. «ոեւէ մէկը Օրէնքի գործադրութեամբ չի կրնար արդարանալ Աստուծոյ առջեւ» (Գղ 3.11): Ուրեմն, երբայական մտայնութեան մէջ, Օրէնքը Աստուծոյ առջեւ արդարանալու կը ծառայէր: Կը

կարծէին, որ Օրէնքի գործադրութեամբ Աստուծոյ աչքին պիտի արդարանան:

Յիսուս Օրէնքին գործադրութիւնը բաւարար չի տեսներ՝ Աստուծոյ աչքին արդարանալու համար: Աստուծոյ աչքին արդարանալու համար աւելին պէտք է քան Օրէնքին գործադրութիւնը:

Նախ, պէտք է որ Օրէնքը գործադրուի ամենայն հաւատարմութեամբ. եւ երկրորդ՝ «կատարեալ» ըլլալով, այսինքն՝ երկնաւոր Հօր նմանելու ընթացքին մէջ ըլլալով...:

Օրէնքի ճշմարիտ ուսուցման մասին Յիսուսի կեցուածքէն ետք՝ կը տեսնենք անոր հայեացքը սպանութեան, շնութեան, ամուսնալուծման, երդումի եւ վրէժխնդրութեան մասին: Այս բոլոր նիւթերուն մասին Յիսուս արտայայտուած է «Լսեր էք...իսկ ես կ'ըսեմ»ով (միայն ամուսնալուծման պարագային՝ «Ըսուած է...իսկ ես կ'ըսեմ»): Ասիկա հակադրական ոճ կրնայ թուիլ, բայց այդպէս չէ: Կրնայ նաեւ թուիլ, որ Յիսուս հինը փոխելու կամ սրբագրելու վրայ է, բայց այդպէս ալ չէ: Այլ խօսքով՝ անցեալին ըսուածն երբեք է, այլ անոնց բուն խորքը յայտնած է: Յիսուս Օրէնքին վաւերականութիւնը եւ անժամանցելիութիւնը շեշտելով, ու յայտնելով անոր բուն նպատակը՝ ուզած է մարդը վերադարձնել սրբութեան կեանքին, այսինքն՝ այն կեանքին՝ առանց որուն ո՛չ ոք կրնայ Երկինքի արքայութեան արժանի ըլլալ:

Յիսուս Օրէնքին վաւերականութիւնը եւ անժամանցելիութիւնը շեշտելով, ու յայտնելով անոր բուն նպատակը՝ ուզած է մարդը վերադարձնել սրբութեան կեանքին

ՈՒՄԱՌԻՆԻՄ ԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԱԻՆ:
«Լսեր էք որ անցեալին ըսուած է.՝ Մի՛ սպաներ, որովհետեւ ան որ կը սպաննէ՝ պիտի դատապարտուի:

Իսկ ես կ'ըսեմ.՝ Ով որ առանց պատճառի իր եղբոր դէմ բարկանայ, դատարան պիտի յանձնուի: Ով որ իր եղբայրը յիմար կոչէ, Ատեան պիտի բերուի. եւ ով որ իր եղբայրը անմիտ կոչէ, դժոխքի կրակին պիտի դատապարտուի: Եթէ գոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ գոհարանին առջեւ, գնա՛ նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ա՛պա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ:

Երբ մէկը խնդիր ունի քեզի հետ եւ դատի կը կանչէ քեզ, սկիզբէն համաձայնութեան եկուր անոր հետ՝ դատարան չիկնած, այլապէս քեզ դատաւորին կը յանձնէ, դատաւորն ալ՝ ոստիկանին, եւ բանտ կը նետուիս: Վստահ եղիր թէ բանտէն պիտի չելլես, միկնես որ տուգանքիդ վերջին դահեկանը չվճատես» (21-26):

Կը տեսնենք, որ Յիսուսի խօսքին մէջ աստիճանական խստացում մը կայ. դատարան, ատեան եւ դժոխք:

Ի՞նչ է դատարանին եւ ատեանին տարբերութիւնը:

Յիսուսի ժամանակ եբրայեցի ժողովուրդի կեանքին մէջ, ամէն մէկ ժողովարան կամ սինակոկ դատարան մըն էր: Իւրաքանչիւր քաղաքի մէջ մէկ կամ ակելի թիւով ժողովարաններ կային: Դատական հարցերը կը լուծուէին ժողովարաններուն մէջ: Ամէն մէկ ժողովարան ունէր իր ժողովրդապետը, որ նաեւ դատաւորի պաշտօն կը վարէր:

Իսկ «ատեան» կոչուածը այն ատենուան «Բարձրագոյն ատեան»ն էր, որ Երուսաղէմի մէջ կը գտնուէր: Անիկա կրօնական վերնախաւին կողմէ կը դարձուէր:

Գալով դժոխքին՝ անիկա աստուածային դատաստանին կը վերաբերի:

Յիսուս կ'ըսէ, թէ ան որ իր եղբօր առանց պատճառի բարկանայ՝ դատարանի վճիռին պիտի յանձնուի, ան որ զայն յիմար կոչէ՝ ատեանի վճիռին, եւ ան որ զայն անմիտ կոչէ՝ դժոխքի դատապարտութեան:

Յիմար կոչելը կամ անմիտ կոչելը այսօր մեզի համար իրենց իսկական նշանակութիւնը կորսնցուցեր են, որովհետեւ բառերը թարգմանաբար մեր լեզուին մէջ եկած են, եւ հետեւաբար կորսնցուցած են իրենց զօրութիւնը կամ իրենց իմաստային տարողութիւնը: Նկատի ունենալով որ Յիսուսի խօսքը աստիճանական խստացում մը կը յայտնէ, ուրեմն՝ եղբայրը անմիտ կոչելը շատ ակելի խիստ բան մը համարուած էր քան յիմար կոչելը: Իսկ յիմար կոչելը ակելի խիստ՝ քան բարկանալը:

Մեզի համար էականը բառերուն ունեցած նշանակութեան տարողութիւնը չէ, այլ այն՝ ինչ որ անոնցմով Յիսուս ըսել կ'ուզէր: Բառերէն անդին՝ կարեւորը այն է, թէ մարդը իր սրտին մէջ ի՞նչ տրամադրութիւն ունի եղբօրը հանդէպ: Եթէ ան ատելութիւն ունի՝ պիտի դատուի, կ'ըսէ Յիսուս: Որքան խիստ ատէ՝ այնքան խիստ պիտի ըլլայ իր դատաստանը: Ըստ Յիսուսի, ատելը՝ արմատն է սպանութեան: Ան որ կ'ատէ՝ սպանութեան արմատը կը տնկէ իր հոգիին մէջ: Ատելութիւնը սպանութիւն կը պատճառէ:

Արդ, Յիսուս իր հետեւորդները կը զգուշացնէ, որ այդ արմատին տեղ չտան իրենց հոգիներուն մէջ:

«Եթէ զոհարանին վրայ ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ զոհարանին առջեւ, գնա նախ հաշտուէ՛ եղբօրդ հետ եւ ա՛պա եկուր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛» (Մտ 23):

Կրնայ ըլլալ որ մենք ոեւէ մէկուն հետ հարց չունենանք, բայց անիկա կրնայ մեզի հետ հարց ունենալ: Այդ պարագայի՞ն ինչ պիտի ըլլայ մեր կեցուածքը:

Յիսուս դիտումնաւոր կերպով մեր կեցուածքը կը դնէ Աստուծոյ հետ մեր փոխյարաբերութեան

ծիրին մէջ, որ պաշտամունքն է:

Ընդհանուր ճշմարտութիւն է, որ Աստուծոյ հետ մեր կապը միշտ պայմանաւոր է մարդոց հետ մեր ունեցած կապով: Անկարելի է, որ Աստուծոյ հետ մեր կապը լաւ ըլլայ, եթէ երբեք մարդոց հետ մեր կապը ակրուած է կամ սխալ բան մը կայ այդ կապին մէջ: Մարդոց հետ մեր վարմունքը անանջատելի է Աստուծոյ հետ մեր փոխյարաբերութեան:

Եթէ մէկը մեզի հետ հարց ունի եւ եթէ յիշենք՝ պէտք է որ այդ հարցը դարմանելու նայինք, նոյնիսկ եթէ այդ հարցին պատճառը մեր գործած բարիքը ըլլայ:

Կը պատահի որ մէկը բարիքէ գատ ուրիշ ոչինչ կը գործէ, բայց իր կատարածները կրնան նախանձի եւ ատելութեան հակազդեցութիւն ծնիլ: Յիսուս կ'ուսուցանէ, որ իր հետեւորդները ակելի արդարութիւն ընեն, այսինքն՝ նոյնիսկ դարմանելու նային այն հարցը, որ իրենց կողմէ չէ ստեղծուած: Անոնք պէտք է երթան եւ նախանձող կամ ատող իրենց եղբայրը փորձեն սիրաշահիլ: Որովհետեւ այդ պարագային է, որ Աստուծոյ հետ իրենց փոխյարաբերութիւնը վաւերական կ'ըլլայ: Յիսուս իր քարոզութեան ընթացքին բազմաթիւ անգամներ յիշեցուցած է Ովսէ մարգարէի 6.6-ը. «ես ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ»: Ասիկա ըսել չէ, թէ Աստուծոյ իր եւ մարդուն մնայուն փոխյարաբերութեամբ չէ հետաքրքրուած: Այլ կը յայտնէ, որ այդ փոխյարաբերութիւնը վաւերական կ'ըլլայ, երբ պաշտամունքի եկողին եւ իր նմանին միջեւ փոխյարաբերութիւնը լաւ է:

25-րդ եւ 26-րդ համարներով Յիսուս իր հետեւորդներուն կը պատուիրէ դատարան չհասած հաշտուիլ ոսոխին հետ: Ան կ'ըսէ, թէ նոյնիսկ եթէ գիտես որ դիմացինդ է անիրաւը, գնա՛ եւ հաշտութեան եկուր անոր հետ: Այդ հաշտութիւնը կրնայ զոհողութիւն պահանջել քեզմէ: Ատով հանդերձ, մի՛ վարանիր, գնա՛ եւ հաշտուէ՛: Նախընտրելի է, որ դուն կամաւորաբար որոշ զոհողութիւն յանձն առնես եւ որոշ վնաս կրես, քան թէ յետոյ ակելի մեծ վնասներու ենթարկուիս:

Յիսուս աշխարհի կեանքէն այս օրինակներով իր հետեւորդներուն կը սորվեցնէ մարդոց հետ իրենց փոխյարաբերութեան մէջ առակել զգայուն ըլլալ. կը պատուիրէ որ իրեն հետեւորդները շարժին այնպէս՝ որ հաշտութիւն տիրէ մարդոց միջեւ, որովհետեւ այդ հաշտութեամբ է, որ կարելի կ'ըլլայ Աստուծոյ հետ վաւերական փոխյարաբերութիւնը:

(Շարունակելի 17)

ՅԱՋՈՐԴ ՇԱՔԹՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅ

Յինգշաբթի, 11 Դեկտեմբեր 2008

10.00 > Աղօթածողով՝

Ս. ՅԱԿՈԲ քոյրերու ժողով

Կիրակի, 14 Դեկտեմբեր 2008

10.00 > Առաւօտեան ժամերգութիւն

11.00 > Ս. Եւ անմահ Պատարագ

14.00 > Ժողովրդային ճաշկերոյթ՝

Ս. Յակոբի տօնին առթիւ

ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԵԿԵՂԵՅԻՆՅՍ ԴԻԲԱՆԱՏՈՒՆԸ

ԲՅՅ Է

ԵՐԿՈՒԵԱՔԹԻԷՆ ՈՒՐԲԱԾ

ԺԱՌ 8.30-ԷՆ 16.00

ՀԱՃԵՅԷՔ ԿԱՊՈՒԻԼ ԲԱՐՏՈՒԱՐՈՒԹԵԱՆ՝

514 331 5445 x202

ԿԱՄ ՀՈՎԻԻՆ՝

514 331 5445 x203

ԿԱՄ ԳՐԵԼ ՀԵՏԵԷԿԵԼ Ե-ՀԱՍՅԷԻՆ՝

eglise58@sourphagop.com

ԵԿԵՂԵՅՈՅԱ ԹԵՐԹԻԿԻ ԱՆՍՈՐԻ
ԹԻԷՐՈՒ ԿՐԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԷԶԻՆ ԿՐԱՅ

ՍՈՅՆ ԹԵՐԹԻԿՈՒ Ե-ԱՆԱԿՈՎ
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՁԵՐ Ե-ՀԱՍՅԷՆ
ՈՒՊՈՒԱՐԿԵՅԷՔ
eglise58@sourphagop.com



Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Անուանակոչութեան Տօնին Առթիւ

Ժողովրդային Ճաշկերոյթ

Ցուցադրութիւն

“Յիսնամեայ Ծառայութիւն՝

Ս. Յակոբ Ա. Մայր Եկեղեցի”

ամբողջական տեսահոլովակի (DVD)

Եւ գեղարուեստական յայտագիր

Հաճեցէք ձեր տոմսերը

նախօրօք ապահովել
հեռաձայնելով՝

Տիկ. Վիգի Զարգաւաթեանին

514 979 9415

Դիւանատուն

514 331 5445 x202

Մուտքի Գուրծ

\$20.00

10 տարեկան եւ վարձ՝ նուտքը ազատ
(չափահասի մը ընկերակցութեամբ
Եւ նախօրօք տեղ ապահովելով)

Հովանաւորութեամբ՝

Գերշ. Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի

Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի

Նախագահութեամբ՝

Տ. Եւ Տ. Արամ Եւ Մարի Պէնօհանեաններու

Կազմակերպութեամբ՝

Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ Գործադիր Մարմնին

Կիրակի, 14 Դեկտեմբեր 2008

Կեսօրուայ ժամը 2:00-ին

Հայ կեդրոնի ՀՍԸՄ-Կամք մարզասրահ

Յիսուս Ամենակը Մեկնակեա՝

Անցեալը Գերազանցելու